«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում

Մեթոդիստ՝ Կոստանյան Ծ.

Մանկապարտեզ՝ «Մալիշկայի թիվ 1 մանկապարտեզ » ՀՈԱԿ

2023թ.

Ներածություն

Եթե ուզում ես հասկանալ դու ինձ,

Ներս մտիր անտառ ու ակաջ արա,

Որքա՞ն գույներ կան , բոլորը՝ տարբեր…

Երեխաները մեր ապագան են: Սա իրականության հանրահայտ ձևակերպումներից է: Ինչպիսին կլինի մեր ապագան՝ պայմանավորված է այն իրողությամբ, թե ինչպիսի երեխաներ կկրթենք ու կդաստիարակենք մենք:

ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված է. <<Ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է>>:

Ընտանիքը ազգի դիմագիծն է՝ իր լեզվով, հոգեբանությամբ, ավանդույթներով, ծեսերով: Ամուր ընտանիքը ամուր հասարակության գրավականն է: Ընտանիքը երեխայի համար մի աշխարհ է, ուր նա սովորում է սիրել, ապրել, ուրախանալ, կարեկցել:

Ընտանիքում են արմատավորվում նրա առաջին բարոյական զգացմունքներն ու համոզմունքները, համատեղ փոխհարաբերությունների առաջին քայլերը: Այդ գործընթացն սկսվում է երեխայի՝ նրա ամենամոտ մարդկանց՝ հոր ու մոր առաջին իսկ շփումից: Շփումն, առհասարակ, հարստացնում է երեխաների կենսափորձը:, գիտելիքների պաշարը, ձևավորում բարոյական զգացմունքներ, նրա դիրքորոշումը շրջապատող աշխարհի նկատմամբ:

Ծնողները պետք է ընդունակ լինեն հասկանալու համար հենց իրենց՝ երեխաների ներաշխարհը, կարողանան ստեղծել փոխադարձ սիրո և հարգանքի վրա հիմնված փոխհարաբերություններ: Եթե ընտանիքում երեխան զուրկ է քնքշանքից , ուշադրությունից, խնամքից, հոգեկան ջերմությունից, եթե նրան չեն հասկանում, չունի իր առջև դրական կերպարներ:, ապա որպես անձնավորություն նա շատ դանդաղ կձևավորվի, կյանքում կդառնա անտարբեր ու աննրբանկատ մարդ : Ոչ մի հասարակական, դաստիարակչական հաստատություն չի կարող փոխարինել ընտանիքին:

Երեխան նախ և առաջ կարիք ունի ծնողական գուրգուրանքի : Անհամերաշխ ընտանիքում, ուր չկան ընտանեկան և մանկավարժական ուժերի ճիշտ տեղաբաշխում, ընդհանուր պահանջներ, բովանդակալից շփում երեխաների և մեծահասակների միջև, մանկան հետաքրքրությունների նկատմամբ ուշադրություն, երեխաները սոցիալապես պասիվ են, չշփվող, չեն մասնակցում ընտանիքի կյանքին և աստիճանաբար հեռանում են ընտանիքի անդամներից:

Մեծ դեր ունեն ընտանիքի սոցիալական դիրքորոշումների և արժեքների գնահատման համակարգերը, ընտանեկան ավանդույթները և այլ անմիջական գործոններ: Պակաս կարևոր չեն նաև ծնողների մանկավարժական կրթությունն ու ներքին կուլտուրան, անձնային բարձր որակների դրսևորումները, ընտանիքում երեխաների կյանքն ու անվտանգ գործունեությունը ճիշտ կազմակերպելու հմտությունը: Ծնողների կողմից իրականացվող դաստիարակությունն ընտանիքում պետք է ունենա մանկավարժական ուղղվածություն և բխի առաջին հերթին երեխայի կարիքներից:

Հայտնի է, որ երեխաներն իրենց բնույթով , ընդհանուր առմամբ, ակտիվ և գործունյա են:

Եվ ցանկացած մանկավարժի համար առաջնահերթություն է այդ ակտիվությունից օգուտ քաղելը:

Ուսուցումը պետք է լինի խնդրահարույց: Այն պետք է պարունակի ինքնուրույն հետազոտական գործունեության տարրեր, կրի անհատական ստեղծագործական բնույթի որոնումների կնիքը: Այդ դեպքում կրթությունը ոչ թե սոսկ վերարտադրողական բնույթ կկրի, այլ կվերածվի ստեղծագործական գործունեության: Նման իրավիճակներում կաշխուժանան երեխաների շփումներն ինչպես հասակակիցների, այնպես էլ մեծահասակների հետ, և նրանց մեջ կձևավորվեն դրական կենսափորձ ու անձնային նոր որակներ: Ա. Ի. Սավենկով

Երեխային կրթող անհատը պետք է մշտապես զբաղվի իր իսկ կրթությամբ և իր իսկ բարոյական դաստիարակությամբ:

Աշխատանքի նպատակն է վեր հանել ընտանիք և մանկավարժական աշխատող, երեխա և ընտանիք, երեխա և մանկավարժական հաստատություն փոխհարաբերությունների կարևորությունը: Կարևորել աշխատանքի համագործակցությունը սաների ծնողների հետ հասարակության լիիրավ անդամի դաստիարակության բարդ և մինույն ժամանակ կարևոնագույն գործում:

Գլուխ 1

Անցել են այն ժամանակները, երբ ծնողը բավարարվում էր առավոտյան երեխային մանկապարտեզ բերելով և կեսօրից հետո տուն տանելով: Իսկ թե երեխան ինչպես կդրսևորի իրեն մանկապարտեզում, դիտվում էր միայն որպես մանկավարժի մտահոգության խնդիր: Այլ են հիմա ժամանակներն ու պահանջները: Այսօրվա սերունդը պետք է քայլի ժամանակին համընթաց, լինի բանիմաց, անկաշկանդ:

Աշխարհը փոխվում է, և այդ փոփոխությունը չի ընթանում միատարր ու միակերպ: Ժամանակակից քաղաքակիրթ ժողովրդավարական հասարակարգում մասամբ ընտանիքի վրա է ծանրանում ֆիզիկական և հոգևոր, բարոյական և մտավոր զարգացման հատկանիշներով օժտված անձի ձևավորման, աշխատանքին, հասարակական և ընտանեկան կյանքին պատրաստ լինելու հոգսը:

Աճող սերնդի ձևավորումը ենթադրում է նաև աշխատանքային , ֆիզիկական, գեղագիտական, բարոյական, բնապահպանական, քաղաքական, սեռական ճիշտ դաստիարակության համամասնությունների զուգակցում: Մանկավարժության մեջ ընտանեկան դաստիարակությունը հասկացվում է որպես երեխաների նկատմամբ ծնողական փոխհարաբերությունները կարգավորող համակարգ: Յուրաքանչյուր ծնող պետք է ձգտի դառնալ մանկավարժ: Ընտանիքը ստեղծվում է ոչ թե բնակարանի հասկացությամբ, որտեղ նա ապրում է, այլ որպես զգացմունք, ընկալում, միջավայր, որտեղ ապրում են սիրում, պաշտպանում: Հ. Պեստալոցին մարդկանց ընտանեկան հարաբերությունները համարում էր առաջին և առավել բնական հարաբերություններ:

Ա. Գերցենը գտնում էր, որ ընտանիքը սկսվում է երեխաներից, իսկ Ա. Մակարենկոյի բնութագրմամբ երեխայի ծնունդը երջանկություն է ծնողների համար, իսկ նրանց վատ դաստիարակությունը ծնողների արցունքները:

Պատմությունը մեզ հիշեցնում է, որ բոլոր պետությունները տարբեր ժամանակներում ունեցել են իրենց դժվարությունները՝ հեղափոխություն, պատերազմներ, տնտեսական ու մշակութային ճգնաժամեր: Սակայն դիմակայել ու դարձել են հզոր, որովհետև չի ոչնչացել հասարակության հիմնական բջիջը՝ ընտանիքը: Ժամանակակից Ընտանիքը ևս հայտնվել է մի իրավիճակում, երբ հիմնական ջանքեր

ու ժամանակը ծախսվում են ընտանիքի նյութական ապահովության և ոչ թե հոգեկան աշխարհի ձևավորման և երեխայի ներդաշնակ զարգացման վրա: Ընտանեկան դաստիարակությունը կրթության որոշակի համակարգ է, որը գործում է յուրաքանչյուր առանձին ընտանիքի պայմաններում, ծնողների, երեխաների կենսաբանական առողջությունը, նյութատնտեսական ապահովվածությունը, հասարակական դիրքը, ընտանիքի անդամների քանակը, ապրելաձևը, երեխայի նկատմամբ վերաբերմունքը:

Ընտանիքում են ձևավոնվում այնպիսի բարոյական հատկանիշներ, ինրպիսիք են կամեցողությունը, մտքի ազատությունը, բարությունը, հարգանքը այլոց հանդեպ, աշխատասիրությունը, կարգապահությունը, հավատարմությունը, զգացմունքային կուլտուրան և այլն: Մի խոսքով, այն բոլոր հատկանիշները, որոնք հետագայում անձին օգնելու են արժանապատվորեն հաղթահարել կյանքի դժվարություններն ու տարաբնույթ խոչընդոտները:

Ժամանակակից մանկավարժությունն ընդգծում է ընտանիքի գերակայող դերը երեխաների դաստիարակության և անձի ու անհատի ձևավորման գործընթացում: Ակնհայտ է, որ ծնողներն են երեխային դաստիարակող առաջին մանկավարջները: Նրանք ունեն իրավունքներ և պարտականություններ իրենց երեխաների կյանքի մտավոր և ֆիզիկական զարգացման և արժեհամակարգի ձևավորման առումով:

 Նույնիսկ Կ. Դ. Ուշինսկին,Ս. Տ. Շատսկին,Պ. Պ. Բլոնսկին և այլ ուսուցիչներ նշել են կրթական գործընթացում կրթության և դաստիարակության միասնության կարևորությունները,հնարավորությունները ու կարիքները Ներկայումս մանկավարժական գիտության առաջնահերթ խնդրիներից է անհատի և հասարակության մեջ որակապես նոր հարաբերությունների ուսումնասիրությունը, երեխաների կրթության,ուսուցման և ստեղծագործական զարգացման առավել օպտիմալ ուղիների որոնումը

Ընտանիք ստեղծելու համար բավական է սիրել,

իսկ պահպանելու համար պետք է դիմանալ և ներել:

Մայր Թերեզա

Ծնողների սերը երեխաների հանդեպ շատ կարևոր է, բայց այն չպիտի լինի գերշատ, որովհետև,այս դեպքում այն կարող է բացասական ազդեցություն թողնել. պետք է երեխային ինքնուրույնություն ձեռք բերելու հնարավորություն տալ:

Ոչ լիակազմ ընտանիքներ

Երեխան իր ծնողին ընտրել չի կարող, բայց երեխայի ծնունդը պետք է գիտակցված ընտրություն լինի ընտանիքում:



«Մենք պատասխանատու ենք նրանց համար, ում ընտելացրել ենք»

Անտուան դը Սենտ-Էքզյուպերի



Չմոռանանք նաև, որ ոչ լիարժեք ընտանիքները երբեմն բնական աղետների, դժբախտ պատահարների հետևանք են նաև: Այս պարագայում առավել քան երբևէ կարևոր է նախադպրոցականի հետ աշխատող անձանց բարի և մարդկային վերաբերմունքը, ինչպես նաև մասնագիտական մոտեցումը մանկավարժի կողմից:

Այսպիսով, գալիս ենք եզրահանգման, որ նախադպրոցական հաստատության համար այսօր արդեն առավել քան կարևոր է ուսումնադաստիարակչական բոլոր աշխատանքները կատարել երեխայի հոգեբանությունը չվնասելով՝ սերտ կապ հաստատելով ծնողների հետ, ներգրավելով նրանց նախադպրոցական հաստատությունում տարվելիք աշխատանքների մեջ:

Այսօր մեր կրթության հիմքում է նաև դրված ներառական կրթության համակարգը, որին դեռևս ոչ բոլորս ենք հարմարվել, բայց , ինչպես ասում են, ամեն մեծ բանի հասնում ենք փոքր քայլերով:

Գլուխ 2

Ծնողական ժողով

<<Ընտանեկան հյուրատուն>>

Նպատակներ .

Ծնողների և երեխաների, դաստիարակների ու երեխաների , մանկավարժների ու ծնողների միջև ձևավորել բարյացակամ, փոխադարձ վստահության վրա հիմնված վերաբերմունք:

Զարգացնել ծնողների և մանկավարժների ինքնքգիտակցությունը, պատասխանատվությունը երեխաների նկատմամբ՝ կարողանալով ավելի լավ ճանաչել երեխայի ներքին աշխարհհայեցողությունը:

Խնդիրները.

Զարգացնել ծնողների պատկերացումները նախադպրոցահասակ երեխաների անհատական առանձնահատկությունների մասին՝ ընտանեկան դաստիարակությունն ավելի ճիշտ կազմակերպելու նպատակով:

Մասնակիցներ .

Դաստիարակներ, ծնողներ, մանկավարժ-մեթոդիստ:

Վարողներ.

Մեթոդիստ, դաստիարակ

Նախապատրաստական աշխատանքներ

1.Ծնողական ժողովից քիչ առաջ առաջարկվեց գրել փոքրիկ շարադրություն <<Իմ երեխան, իմ արեգակը>> թեմայի շուրջ: Կարելի է տեղադրել նաև երեխայի լուսանկարները կամ տեղում փորձել նկարել: Մեծ թղթի վրա հարկավոր է գրել երեխայի լրիվ անունը:, իսկ անվան յուրաքանչյուր տառի դիմաց՝ բառ, որը բնութագրում է նրա անհատականությունը և ունակությունները: Որպես օրինակ կբերենք ծնողներից մեկի գրածը՝

Լ-լուսավոր

Յ-յուրօրինակ

Ու-ուրախ

Ս-սրամիտ

Ի-ինքնուրույն

2.Ձևավորել պաստառներ մեջբերումներով՝

<<Ինչպես գյուղացին է հասկանում հողից, բժիշկը՝ հիվանդությունից, ճարտարապետը՝ մարմարից, այնպես էլ ծնողները պետք է հասկանան իրենց երեխաներին:

<<Եթե մենք փոքր մարդիկ ենք, չի նշանակում, որ մենք վախենում ենք մեծ գործերից>>:

<<Ամենաթանկ բանը, որ կարող են տալ ծնողներն իրենց զավակներին, դաստիարակությունն է>>

Մարդկային բոլոր հնարամտությունների հիմքում ընկած է համբերատարությունը>>:

<<Մեր մանուկները նման են կոնֆետների, բայց ինչ կա արդյոք նրանց ներսում>>:

Ծնողական ժողովի ընթացքը

1. Ներածական խոսք

   Դաստիարակ

   _Ճանաչում եք, արդյոք, ձեր երեխային:

   Իհարկե՝ կպատասխանի յուրաքանչյուր ծնող:

   Լեհ մանկավարժ Գալին Ֆիլիպչուկն այսպես է պատասխանել այս հարցին.

   <<Մենք զբաղվում ենք մեր երեխաների հետ կյանքի առաջին օրերից: Այդ մենք՝ ծնողներս ենք կերակրում նրանց, հագցնում ենք, լողացնում, քնեցնում, սովորեցնում ենք կատարել առաջին քայլերը և արտասանել առաջին բառերը, բայց ճանաչել նրանց դժվարանում ենք>>:

   Որպես հոգեբանական մոտեցում՝ ուզում ենք ծնողներին ներկայացնել <<Յոթնագույն ծաղիկ>> վարժությունը:

   _Ձեր երեխան յոթնագույն ծաղիկ է, ձեր առաջ դրված այս ծաղկի նման՝ նուրբ, ծաղկափթիթ:

   Թերթիկների վրա գրել երեխայի անվան փաղաքշական ձևերը: Ցողունի վրա նշել այն անունը, որով դուք դիմում եք երեխային բարկացած ժամանակ:

   _ Այս ծաղիկը մենք նվիրում ենք ծնողներին: Թող այն լինի ընտանեկան ալբոմում և դառնա ձեր ընտանիքի պատմության մի մասը:

Ժողովի ամփոփումը

Բնության մեջ մանուկներն իրենց դրսևորում են խիստ յուրահատուկ: Նրանցից յուրաքանչյուրը անկրկնելի է: Մանկապարտեզի սոցիալական միջավայրը տարբերվում է տնային պայմաններից: Տանը երեխան առաջին պլանում է: Ընտանիքի կյանքը պտտվում է նրա շուրջը: Իսկ մանկապարտեզում նա այնպիսին է, ինչպես բոլորը: Ընտանիքում երեխայի կարգավիճակը պետք է փոփոխություն կրի, երեխան գլխավորը չէ ընտանիքում, այլ ընտանիքի մի մասնիկը:

Ժողովի ավարտ

Հանդիպումը կուզեի ավարտել Ս. Սոլովեյչիկի խոսքերով. <<Ամեն առավոտ ձգտում եմ այն լավին, որ կա իմ մեջ>>:, <<Ինձ տրված է երեխա, նա իմ թանկագին հյուրն է, ես շնորհակալ եմ այն բանի համար, որ նա կա: Նա նույնպես կյանքի է կոչված, ինչպես որ ես: Սա մեզ միավորում է՝մենք կանք, մենք կենդանի մարդիկ ենք: Նա այնպիսին է, ինչպես որ բոլոր մարդիկ: Ես նրան ընդունում եմ , պահպանում եմ նրա մանկությունը, հասկանում եմ, համբերում, ներում: Ես նրա նկատմամբ ուժ չեմ կիրառում, իմ ուժով ճնշում չեմ գործադրում, դրա համար էլ սիրում եմ նրան: Դրանով ես հպարտ եմ և հոգեպես ամուր: Այսպիսով, ուսուցիչն ու ընտանիքը ամուր դաշնակիցներ են: Միայն նրանց արդյունավետ համագործակցության դեպքում կարելի է սպասել դրական արդյունքների:

Կից ներկայացնենք ևս մեկ աշխատանք մեր դասից:

Դիտարկողների վերլուծություն

Ուսումնասիրելով և դիտարկելով հետազոտական աշխատանքը իր ներկայացված թեմայով, կարող ենք հավաստել ևս մեկ անգամ, որ զուր չեն որ երեխաների դաստիարակությունն սկսվում է հենց ընտանիքից: Այս թեման ուսումնասիրելով՝ մեր առջև նպատակ ենք դնում խորհուրդներով օգնել ծնողներին՝ ճանաչել իրենց և իրենց երեխաներին: Հստակ և տեղին էր ներկայացված այն փաստը, որ տարիներ շարունակ աշխատում ենք նախադպրոցական հաստատությունում, դաստիարակում ու կրթում հարյուրավոր երեխաների, առնչվում նրանց ծնողների հետ և տեղեկանում վերջիններիս հուզող հարցերին: Այսօր էլ երեխաներին ընդունում ենք մանկապարտեզ և բախվում մի շարք խնդիրների հետ, և միայն մանկավարժ-ծնող լավ, բարի, ամուր և հոգեբանորեն ճիշտ հարաբերությունների շնորհիվ ստանալու ենք ապագայի մարդ կոչումով անհատներ:

Որպես տնօրեն հավելեմ նաև, որ լավ կլինի հաճախակի կազմակերպել ծնողական ցերեկույթներ, անցկացնել միջոցառումներ, օրինակ՝ <<Գաղափարների տոնավաճառ>> թեմայով: Հաճախակի այցելեն միմյանց, կատարեն փորձի

փոխանակում: Հետազոտական աշխատանքում օրինակելի դասի թեմա է ընտրված< որը անցկացվել է ոչ ավանդական, այլ ավելի նոր և հետաքրքիր մեթոդներով: Ըստ նոր չափորոշչի առանձնացվել էին նպատակ, խնդիր և վերջնարդյունք:

Վերջնարդյունք

Վերջնարդյունքում կունենանք առողջ սերունդ, ամուր հայրենիք

Կկարողանանք համագործակցել ծնողների հետ՝ մի շարք սառույցներ հալեցնելով:

ԿԿարողանանք խորհուրդներով հոգեբանորեն օգնել ծնողներին, որպեսզի ճիշտ ճանաչեն իրենց և իրենց երեխաներին:

Դասի վերջնարդյունքում ստեղծվեց այսպիսի գրքույկ, քրից տեղադրենք մի քանի նկարներ:





Աշխատանքին ներգրավել ենք ընտանիքի անդամներին:

Եզրակացություն

Բոլոր ոլորտներում էլ աշխատակիցը պետք է հմուտ և բանիմաց լինի, բայց եթե երեխայի հետ աշխատող մանկավարժն է ոչ բանիմաց, այս դեպքում կադրային փոփոխությունն անգամ ոչինչ չի անի: Երեխայի հետ տարվող աշխատանքները բազմաբնույթ են ու լի դժվարություններով: Այդ դժվարությունները նախադպրոցական հաստատությունը պետք է վերացնի և կարգավորի երեխայի ընտանիքի հետ միասին: Ծնողը անմիջական պատասխանատուն և պատասխանատվություն կրողն է իր երեխայի կյանքի և դաստիարակության համար:

Մանկավարժն այն կապող օղակն է, որ վեր է հանում իր առաջ դրված խնդիրները, լուծում դրանք և ներկայացնում այդ ամեն հասարակության մեջ բնականոն ընթացքի տեսքով: Մենք պարտավոր ենք սիրել և հարգել մեր կոչումն ու կատարած աշխատանքը: Մենք պարտավոր ենք յուրաքանչյուր երեխայի մեջ տեսնել անկրկնելի այն գծերը, որ շատերի համար նույնն են բոլորի մոտ:

Այսպիսով, գործնական մասում ներկայացված է ԽԻԿ համակարգով դասապլան: Այդ դասը մեկն է այն բազմաթիվ դասերից, որոնք պետք է արվեն իմ աշխատավայրում ապագայում: Շնորհակալություն:

Գրականության ցանկ

- Բ. Վարդանյան <<Մանկավարժության միջօրեականներում>>
- <<Նախաշավիղ>> ամսագիր
- Մեղրակյան Ս. Ա. << Ընտանիքի հոգեբանություն>>,«ՈՒրարտու համալսարան» //ք.Երևան 2010թ.